ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

*Մասնակցում էին՝*
***Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու***
Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքերի, շինությունների պահպանման բաժնի պետ
***Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ***
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
***Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ***
Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ
Գևորգ Ղահրամանյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի հաշվառման մասնագետ.
***Հանձնաժողովի քարտուղար՝***
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին**
**1.1** Մարտունի և Գավառ քաղաքների ՀՓՁ շենքներին կից ավտոկայանատեղիների կառուցման, ՀՓՁ շենքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ս.թ. հոկտեմբերի 15-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում (Համակարգ) և գնումների պաշտոնական տեղեկագրում:
1.2 Գնային առաջարկ պարունակող հայտերի բացման վերջնաժամկետի՝ 2019թ. հոկտեմբերի 22-ի ժամը 10.00-ի դրությամբ հայտերի փաթեթները տեսանելի են Համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր» բաժնում, սակայն Համակարգում առաջացել են խնդիրներ և ընթացակարգը հնարավոր չէ շարունակել էլեկտրոնային Համակարգով: 24.10.2019թ. Ֆինանսների նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ ընթացակարգը անհրաժեշտ է շարունակել փաստաթղթային եղանակով (գրությունը կցվում է):
**1.3** ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող աշխատանքի նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված:

**1.4 *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները***

| *N* | *Մասնակցի անվանումը* | *Հասցեն, էլ. փոստը* |
|---|---|---|
| *1* | *«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ* | *Ք. Երևան, Էրեբունի Նուբարաշեն 11փ. 21 26, gevorgyan.nersisyan@mail.ru* |
| *2* | *Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ* | *Ք. Մարտունի Սայաթ-Նովա 5, martununorogshin@mail.ru* |
| *3* | *«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ* | *Ք. Երևան, Պողոսյան 1 նրբ. 62/2 տ, vaghzhan-llc@mail.ru* |
| *4* | *«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ* | *Ք. Գավառ (Կամո) Վաղարշակ Փոշոյան 1, hazarashen@gmail.com* |
| *5* | *«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ* | *Ք. Երևան, Կողբի 1 փ. 5, best.building@mail.ru* |
| *6* | *«ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ* | *Ք. Սևան Իսակովի 3, a.kocharyan@cesco.am* |

**2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**
2.1 «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ, «Գևորգյան և Ներսիսյան» և «Բեսթ Բիլդինգ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
2.2 «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ և Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ հայտերը ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես, բացակայում են հրավերով սահմանված լիցենզիան և ներդիրները:
2.3 «ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ հայտը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան. մասնավորապես, հայտով ներկայացված է «ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ և «Արման-Երեմ» ՍՊԸ համատեղ գործունեության պայմանագիր, հայտը, ներառյալ գնային առաջարկը, ներկայացված է «ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ լիազորված ներկայացուցչի կողմից էլեկտրոնային թվային հաստատմամբ, բացակայում է «Արման-Երեմ» ՍՊ ընկերության էլեկտրոնային թվային հաստատումը: Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.3 ենթակետով սահմանվում է. «Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:»

## 3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.

ՀՀ դրամ

| Չ/հ | գնման առարկայի անվանումը | Զբաղեցրած տեղերը | մասնակիցներ | նախահաշ-վային գին | գնային առաջարկները | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ | ընդh. գինը |
| 1 | Արտակարգ իրավիճակներին առնչվող շենքերի կառուցման աշխատանքներ /Մարտունի քաղաքի ՀՓՋ շենքին կից ավտոկայանատեղիի կառուցման, շենքի նորոգման և կից ավտոկայանատեղիի բարեկարգման աշխատանքներ | 1 | «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ | 29 278 720 | 20 538 656,17 | 4 107 731,23 | 24 646 387,40 |
| | | 2 | «ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | | 20 654 000 | 4 130 800 | 24 784 800 |
| | | 3 | Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ | | 21 250 000 | 4 250 000 | 25 500 000 |
| | | 4 | «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ | | 21 300 000 | 4 260 000 | 25 560 000 |
| | | 5 | «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ | | 21 708 000 | 4 341 600 | 26 049 600 |
| | | 6 | «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ | | 22 900 000 | 4 580 000 | 27 480 000 |
| 2 | Արտակարգ իրավիճակներին առնչվող շենքերի կառուցման աշխատանքներ /Գավառ քաղաքի ՀՓՋ շենքին կից ավտոկայանատեղիի կառուցման, շենքի նորոգման և կից ավտոկայանատեղիի բարեկարգման աշխատանքներ | 1 | «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ | 54 064 080 | 37 950 000 | 7 590 000 | 45 540 000 |
| | | 2 | Մարտունու «Նորոգշին» ԲԲԸ | | 38 300 000 | 7 660 000 | 45 960 000 |
| | | 3 | «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ | | 39 576 000 | 7 915 200 | 47 491 200 |
| | | 4 | «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ | | 41 162 804,08 | 8 232 560,82 | 49 395 364,90 |
| | | 5 | «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ | | 42 400 000 | 8 480 000 | 50 880 000 |
| | | | «ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | | 25 350 600 | 5 070 120 | 30 420 720 |

***4. Հանձնաժողովը որոշեց.***

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով մինչև ս.թ. հոկտեմբերի 25-ը, ժամը 18.00-ը և «ՎԱՂԺԱՆ» ՍՊ, Մարտունու «Նորոգշին» ԲԲ ընկերություններին ծանուցել՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

4.2 Հանձնաժողովի նիստը հրավիրել ս.թ. հոկտեմբերի 28-ին, ժամը 10.00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

***28.10.2019թ., ժամը 10.00***

***5. Ընդունել ի գիտություն.***

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունը:

***6. Հանձնաժողովը որոշեց.***

6.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել «ՇԻՆԻՆԺ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

- 1-ին չափաբաժնով՝ «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ
- 2-րդ չափաբաժնով՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6.3 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6.4 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6.5 ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/80 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

**Հանձնաժողովի**

նախագահ՝ ____________ Հ. Պողոսյան

անդամներ՝ ____________ Գ. Բոյաջյան

____________ Հ. Ծատուրյան

____________ Ա. Մկոյան

քարտուղար՝ ____________ Ա. Գալուստյան